**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2**

**№ ԳՀԾՁԲ-20-7/9-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 16 -ը հունիսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 05.05.2020թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-7/9-3 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 25-ի N 2186-Ա որոշումը և այդ որոշման հիման վրա 01.02.2021թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է Կատարողի կողմից մատուցած ծառայության (այսուհետև՝ Ծառայություն) դիմաց կատարել վճարում:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 1 999 800 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կկատարի համապատասխան սույն Համաձայնագրի N 1 Հավելվածով՝ սահմանված ժամկետում և կարգով:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի պայմանները կիրառվում են թիվ 1 համաձայնագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա սույն Համաձայնագիրը կնքելը և ապրիլի 30-ից հետո կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում թիվ 1 համաձայնագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագրերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1 Հավելվածը բաղկացած է 1 թերթից, հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ք. Երևան, Զ. Սարկավագի 157 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Արարատբանկբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1510023294810100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00803554 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն՝ |
| Ս. ՍԱՀԱԿՅԱՆ | Ս. ԱԶԱՏՅԱՆ |

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման ենթակա ծառայության անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ. ընդ որում՝ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | դերձակի ծառայություններ /Կիտել՝ կիսաբրդյա, ուսադիրներով և տաբատ՝ կիսաբրդյա, երկարաճիտ կոշիկների մեջ դրվող անհատական պատվեր/ | 98391120/38 | 1999800 | 1999800 | 1999800 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախա[illegible]

**ԿԱՏԱՐՈՂ**

« Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ
տնօրեն

Ս. ԱՌԱՏՅԱՆ